

## ԿՐՕՆԱԿԱՆ

## ԱՆԾԱՆՅՈՒ ԱՍՏՈՒԱԺԸ

(Փոխադրութիւն Նաումանից)

Գտի բազին մի յորում գրեալ էր  
Անծանօթին Աստուծոյ

Գործք ԺԷ. 25.

Գեղեցիկ Յունաստանում՝ ևս, Աթէնքի փառաւոր տաճարների և սաղարթախիտ ձիթենիների մէջ կային մարդիկ, որոնք տանջւում էին խորին տենչով դէպի ճշմարիտ Աստուածը։ Դորա ապացոյցն էր «անծանօթին Աստուծոյ» նուիրում տաճարի գոյութիւնը։ Այս կարճ արձանագրութիւնը մի և նոյն ժամանակ հեթանոսութեան դատապարտութիւնն էր։ Աթէնքում հարիւրաւոր աստուածներ կային, աստուածուհիներ, յաւերժահարսեր, կիսաստուածներ, բայց որոնող և խնդրող հոգիներին բաւականութիւն չէին տալիս նոքա։ Անդրիններն ու արձանները, զոհերն ու թափօրներն անկարող էին այդ մարդկանց պահանջները գոհացնել, նոցա ծարաւը յագեցնել։ Բանաստեղծական աստուածներից դէպի ճշմարիտ Աստուածն էին տենչում, եթերային և հոտանուշ աստուածներից դէպի իրականը։ Մեծ նեղութիւնների, ժանտախտի, պատերազմի, յուսահատութիւնների ժամանակ, Ոլիմպոսը ծրիծաղացող և թեթեամիտ երաժշտութեան հման վշտացեալներին աւելի էր տանջում, քան մխիթարում։ Եւ ահա Յունաստանը իւր ձեռքերը բարձրացնում է դէպի վեր, աւելի բարձր քան աստուածների լեռները, դէպի անծանօթ Աստուածը։ Եւ այդ անծանօթ Աստուածն էր, բոլոր կենդանութեան տէրը, որ լսեց տառապողների հառաչանքը և ուղարկեց նեղեալների փրկիչ, մեղաւորների օգնական, մարդկանց բաւող Բիսուս Քրիստոսի աւետարանը։

Երկու հազար տարի անցնելուց յետոյ՝ մարդիկ դարձեալ «անծանօթին Աստուծոյ» խօսքերի մասին են մտածում։ Նորա չլիջել են քրիստոնեայ երկիրները, տեսել են հազարաւոր եկեղեցիներ փայլուն խաչերով և խեղաններով, լսել են բազմաթիւ քարոզիչների, կարդացել են գեղեցիկ խօսքեր մահարձանների վերայ, բայց դորա հետ նաև մի գաղտնի տենչանք ու որոնում նկատել, բաւականութիւն չգտած մի մաքառում և ակնկալութիւն նոյն իսկ քրիստոնեական եկեղեցիների և հրապարակային քրիստոնէութեան մէջ։ Այժմ էլ շատ հոգիներ դատարկ են զգում իրենց և յուսահատ, ինչպէս երբեմն Յունաստանում։ Նորա երազում են մի աւելի բարձր և անսահման բան և չեն գտնում այն ոչ ժամադրքում և ոչ շարականում։ Քրիստոնեաների մէջ ևս լսում են հառաչանքի և հեծութեան ձայներ, դէպի անծանօթ Աստուած։

Բոլոր ժամանակներին և մարդկանց յատուկ է այս որոնումն ու տենչը առ Աստուած։ Ինչ որ մեր նախահայրերն են գտել, լաւ էր նրանց համար, բայց նախահայրերի Աստուածն իւր ամբողջութեամբ և էութեամբ այլ ևս կենդանի չէ մեզ համար։ Մենք պէտք է նորան գտնենք և պաշտենք։ Իւրաքանչիւր նոր սերնդի համար Աստուած անծանօթ է և քողարկուած մի պատկեր։ Պէտք է նոր ի նորոյ քաջութիւն պղծ և յայտնուի սրտերին, ինչպէս Պօղոսն արաւ Աթենացիների վերաբերութեամբ։ Նա բազմաթիւ աստուածների և տաճարների միջից Աթենացիներին դէպի անծանօթ, բայց ճշմարիտ Աստուած առաջնորդեց, որ երկնքի և երկրի Տէրն է, որ տաճարներում չի բնակւում և մարդկանց ձեռքով խնամւում, բայց ամէնքին շունչ և կենդանութիւն է տալիս։ Այս ճշմարիտ Աստուածն է, որ յաճախ անճանաչելի է դառնում մարդկանց ձեռքով։ Նորան պաշտելու համար մարդիկ տաճարներ են կանգնում և տօներ հաստատում։ Բայց տաճարները ցուրտ են և տօները մեռած, եթէ հոգիները նրան չեն որոնել և գտել և իրենց սիրտը բնակարան կազմել նորա համար։